

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ
ГОСУЧРЕЖДЕНИЙ
АРМЕНИИ



UNION OF STATE, LOCAL
GOVERNMENT AND PUBLIC SERVICE
EMPLOYEES OF ARMENIA

«19» մարտի 2020 թ.

N 26-01

**ՀՀ փոխվարչապետ, պարետ
Տիգրան Ավինյանին**

Հարգելի պարոն Ավինյան

Հաշվի առնելով ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը «Արտակարգ դրություն հայտարարելու մասին», COVID-19 պանդեմիկ տարածումը, ինչպես նաև «տանը մնալու» կոչերը՝ բազմաթիվ աշխատող քաղաքացիներ այս օրերին դադարեցնում են աշխատանքը՝ մեկուսացման, պարտադիր կամ կամավոր ինքնամեկուսացման (այդ թվում քաղաքացիական զգոնությունից ելնելով), ինչպես նաև գործատուի կողմից կորպորատիվ-սոցիալական պատասխանատվություն ցուցաբերելու և աշխատանքը դադարեցնելու հետ կապված:

Այս իրավիճակի հետևանքով առաջացած սոցիալական խոցելիությունն ու լարվածությունը մեղմելու համար, առաջարկում ենք նախատեսել երաշխիքներ և աջակցության ծրագրեր՝ վերոնշյալ պատճառներով աշխատանքը դադարեցրած

- 1) ինչպես պետական ու համայնքային, այնպես էլ մասնավոր ոլորտի աշխատողների, այդ թվում՝ օրավարձով աշխատողների վարձատրության խնդրի հետ կապված
- 2) աշխատանքը դադարեցրած անձանց կողմից կոմունալ վճարումների և հարկային պարտավորությունների կատարման հետ կապված
- 3) վարձակալությամբ վերցրած տարածքներում գործունեություն ծավալող աշխատանքը դադարեցրած փոքր և միջին տնտեսվարողների, ինչպես նաև

առևտրով զբաղվող անհատների կողմից վարձակալության վճարների պարտավորությունների կատարման հետ կապված

Խնդրում են նաև հաշվի առնել բազմաթիվ չգրանցված աշխատողներին, որոնք այս իրավիճակում գտվում են էլ ավելի խոցելի վիճակում:

Հրավիրում ենք Ձեր ուշադրությունը աշխատողների մեկ այլ խմբին, այսպես կոչված gig-economy աշխատողներին, որոնք են, օրինակ, սննդի և այլ ապրանքների առաքմամբ զբաղվող ընկերությունների առաքիչները, ինչպես նաև հավելվածի միջոցով վարորդ-ուղևոր կապող և փաստացի տրանսպորտային ծառայություն մատուցող ընկերություններում ներգրավված վարորդները: Այս աշխատողները հանրության ինքնամեկուսացման պայմաններում աշխատում են առավել ծանրաբեռնված ռեժիմով՝ պայմանավորված այդ ծառայությունների բարձր պահանջարկով և համաճարակի պայմաններում առավել խոցելի խումբ են առողջության և անվտանգության տեսանկյունից՝ թե՛ սեփական, թե՛ հանրային: Անհրաժեշտ է այդ աշխատողների, ինչպես նաև սննդի/խնամքի ու նմապանատիպ ծառայությունների աշխատողների հետ կապված լրացուցիչ երաշխիքների, ստանդարտների ու անվտանգության միջոցառումների ապահովում պետական մակարդակով:

Հարգանքով՝
ՃՀՄ նախագահ



Ա. Ասատրյան